Ջուած Վասիլ Առաջնով (867—887) կը սկսի ուղղութիւն մը, որուն հետքերը գեղարուեստից բաղմաթիւ ճիւղերուն մէջ կ'երևան. այն ատենները և անկէ շատ յառաջ կը տեսնենք որ Հայք քաղաքակրթութեամբ ամէնէն երևելի տեղեր կը գաղթեն, մանաւանդ Երուսաղէմ և Եգիպտոս՝ ուր յիշատակարաններն ալ անպակաս չեն, և այս տեղերէն ալ Եւրոպա։ Աախէնի մայր-եկեղեցւոյն և ի մասնաւորի Germigny des-Prés (Օրլէանի քով) ժամին շինուածքն իր ճակատին վրայ կը կրէ իսկական արևելեան կնիքը. այնպէս որ „մանրամասն տեղեկութիւն չունեցողները զայն ժպտին, կը զրուցէ պրոֆ. Ստրըզգովսկի, եթէ ըսեմ որ անկարելի բան չէ թէ յիշեալ եկեղեցւոյ շինութեան մէջ հայ մը մասնակից եղած ըլլայ":—Հայկական ճարտարապետութեան ուսումը դեռ օրրոցի մէջ է, ինչ կ'ըսենք, տակաւին խանձարրոյ մէջ ալ չէ։ Տեսած ենք հայ ճարտարապետներ՝ որոնք՝ երբ մեղմէ լսած են թէ հայկական ըսուած ճարտարապետական ոճ մըն ալ կայ՝ արհամարհական քմծիծաղով մը խօսած են... Ճատ խրատացի է պրոֆ. Ստրըզգովսկիի ըսածը թէ—Դուք՝ Հայերդ չէք գիտեր թէ ինչ՛որ ունիք. Հայկական արուեստը ժամանակին իւրին ճարտարապետութեան զարգացման մէջ առաջնորդի դեր ունեցած է։

## ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Բաքուից, երդուեալ հաւատարմատար Ս. Ս. Յարութիւնեան նուիրում է 1904 թ. ընթացքում մի-մի օրինակ «Մուրճ»—1) Վերին Աղդանի գիւղական դպրոցին. 2) Քարվանսարայի գիւղական վարչութեան. 3) Դիլիջանի գիւղական վարչութեան. 4) Ղարադաշի գիւղական վարչութեան. 5) Մեծ-Ղարաքիլիսայի գիւղական վարչութեան։

Բաքուից, երդուեալ հաւատարմատար Յ. Յ. Սաղաթելեան նուիրում է 1904 թ. ընթացքում մի-մի օրինակ «Մուրճ»—1) Ալիքուչակի հասարակութեան. 2) Բաշ-Աբարանի գիւղական վարչութեան. 3) Մողնու ս. Գէորգ վանքին. 4) Մակուի ս. Թադէոս Առաքեալի վանքին. 5) Աշտարակ, Ղարաքիլիսայի գիւղական վարչութեան։

Յիշեալ հասցէներով արդէն ուղարկուած են լոյս տեսած համարները։ Խմբագրութիւնս խնդրում է ուղարկած համարները չստանալու դէպքում իսկոյն յայտ-

նել էրան և աւելի ճիշտ ու ապահով հասցէ մատնանիշ անել։ Ցանկալի է, որ այդ համարներից որքան կարելի է շատ ընթերցողներ օգտուեն։

---

## ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

**ՇՈՒՇԻ**, *տիկին Արուսեակ.*—Ձեր պատմուածքը չի տպուելու։

**ԽԱՐՏՈՒՄ** (*Սուդան*), *պ. Ն. Վ.*—Ձեր ուզածները ուղարկեցինք։

**ՆՈՐ-ՋՈՒՂԱ** (*Պարսկաստան*), *Մ. Կ.* Շտապեցէք ուղարկել շարունակութիւնը։

**ՀԱՅԴԵԼԲԵՐԳ** (*Գերմանիա*), *Յ. Բ.*—Ստացանք Uber deu einfluss der Naturwiss· auf die Weltanschauuug» բրոշիւրը իր Թարգմանութեամբ. կը պատասխանենք, երբ ծանօթանանք։

**ԿԱԼԿՈՒՏՏԱ** (*Հնդկաստան*), *Ա.*—Ուղարկեցինք։

**ԱԼԵՔՍԱՆԴՐԻԱ** (*Եգիպտոս*), *Դ. Կ. Փ.*—Մենք կանոնաւորապէս ուղարկում ենք. ցոյց տուէք աւելի ապահով ճանապարհ. կրկին ուղարկեցինք բոլորին № 1։

**ՊԱՍԱԴԵՆԱ** (*Հ.-Ամերիկա*), *պ. Փ. Ս. Ե.*—19 ր. 20 կ. յանձնեցինք «Գուտտ.»-ին։

**ԴԱՐՄՇՏԱԴՏ** (*Գերմանիա*), *Մ.-Շ.*—Պատուիրած նամակում դրամ չգտանք։ Դրամ փոխադրելու համար ուրիշ միջոցներ կան։

**ՄՈՍԿՈՒԱ**, *Կ. Հ.*—«Հացթուխ Սիմոնը» կը տպուի յաջորդ համարում։

---

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

*Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեան*

**ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՈՒ**

**ՊԱՏԿԵՐՅԱՐԳՈՒԹԻՒՆԸ**

**ՊԱՏՄԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**

**ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ**

*Ս.-Պետերբուրգ, 1904 Թ.*

Գինն է 1 ր. 50 կ.

Ծախւում է Թիֆլիսի «Կենդրոնական» և «Գուտտենբերգ» գրավաճառանոցներում և Ալ. Ստեփանեանցի մօտ (Զուբալովի քարվանսարայ)։ 1—6

---

Ռումանիայում և Բուլղարիայում «Մուրճ»-ի բաժանորդագրութիւնը ընդունւում է Ռուսչուկ քաղաքում, պ. Գառնիկ Մազմանեանի գրախանութում։

---

Ժամանակաւոր պատասխանատու-խմբագիր՝ Յ. Սպենդիարեան
Հրատարակչուհի՝ Վ. Քանանեան